ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<16>> հուլիսի 2013թ. N 307

Ք.Արմավիր

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի բնակիչ Ժորա Ղազարյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Արմավիրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հուլիսի 11-ի եզրակացությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Ժորա Ղազարյանին հատկացնել 30000 /երեսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

30,0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի ՍՇՏԳ-ի կողմից Լուկաշին համայնքի. բնակիչ Ժորա Ղազարյանի ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Ժորա Ղազարյանը ապրում է իր սեփական տանը, մենակ, առաջին կարգի հաշմանդամ է և ստանում է 59090դրամ թոշակ:

Ընտանիքը հաշվառված է Արմավիրի անապահովության գնահատման համակարգում, նպաստ չի ստանում՝ միավորը սահմանայինից ցածր լինելու պատճառով:

Արմավիրի ՍՇՏԳ-Ի ՊԵՏ՝ Ռ.ԱՐՏԵՆՅԱՆ

կատարող Ա. Ստեփանյան

11. 07..2013